



Նոյեմբերի 13ին Ասորոտականի Արմեա քաղաքում կործանել հիանդու-
թիւնից յետոյ հանգեաւ ի Տէր Ասորպատականի վեճակաւոր առաջնորդ Կեր-

ԳՐԻԳՈՐ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՇԵՂԵԱՆՅ

47 տարեկան հասակում:

Հանդուցեալը թէ Հայ Ազգին եւ Նորա Եկեղեցւոյն մատուցած հարստացաւ եւ
անձնուէր ծառայութեամբք եւ թէ իւր բարեբաղայ եւ եռանդուն բնասորու-
թեամբք արժանապէս վայելումէր Մայր Աթուոյս միաբանից եւ զինքը ճանա-
չող հոյ հասարակութեան անկեղծ սէրն ու յարգանքը:

Սա 1848 թուին մտել է հոգեւորական կոչման մէջ եւ իւր ուսումն ու կրթու-
թիւնը ստացել է Մայր Աթուոյս Ժողովարանաց ուսումնարանում: 1857 թուի
Մարտի 12ին վարդապետութեան օծումն է ընդունել Մալխասեան Պօղոս եպիս-
կոպոսի ձեռնադրութեամբ: Մատթէոս Կաթուղիկոսի եւ Ս. Աննոգի հրամանաւ
1859 թուի օգոստոսի 2ից մինչեւ 1864 թիւը վարել է Գանձակու Յաջորդու-
թեան սրահտոնը: ամենայն աշակրջութեամբ եւ արդիւնաւորութեամբ, ուստի եւ
1860 թուին իւր հարստացաւ ծառայութեան համար պարգեւատրուել է Տփիսաւ
թեմով: Առաջնորդ Ջալալեան Սարգիս Արքեպիսկոպոսից ծագիկայ փրկումով: 1861
թուի մարտի 10ին իւր արդիւնաւոր ծառայութեան համար պարգեւատրուել է
վարդապետական լանջական կապիւ: 1864 թուի յուլիսի 4ին ըստ առաջոր-
կութեան Մատթէոս Կաթուղիկոսի Բարձրագոյն հրամանաւ կարգուել է անդամ
Աննոգի Ս. Էջմիածնի, սրպիսին սրահտն ստանձնած էր մինչեւ իւր մահը: 1867
թուին իբրեւ հրաւիրակ հանդուցեալ Գէորգ Գ. Կաթուղիկոսի գնալով Կ. Պո-
լիս եւ ներկայանալով Տաճկաց օգոստոսիս Սուլթան Ազիզին պարգեւատրուել
է Նորին Կայսերական Սեփեթիւնից Մեջլիսիէի Գ. աստիճանի շքանշանով:
1868 թուի Աեպտեմբերի 14ին իւր վարդապետական կոչման մէջ ցոյց տաւած
արդիւնաւոր ծառայութեանց համար ստացել է հանդուցեալ Գէորգ Գ. Կաթու-
ղիկոսից եպիսկոպոսութեան բարձր աստիճանը: 1869 թուի ապրիլի 20ին ի
արևմուտք իւր եռանդուն գործունէութեան ըստ առաջարկութեան Գէորգ Գ.
Կաթուղիկոսի ստացել է Ռուսաց Կառավարութիւնից Ս. Աննայի Բ. աստիճանի
շքանշանը: Իսկ 1879 թուին ըստ կարգադրութեան Գէորգ Գ. Կաթուղիկոսի
նշանակուել է վեճակաւոր առաջնորդ Ասորոտականի Արքեպիսկոպոսական կո-
չումն ստանալով Նոյն Վեհափառութիւնից:

Հանդուցեալը մարմինը Ս. Աննոգի թաղմութեամբն ու կարգադրութեամբք
Որմիայից փառադրեցաւ ի Սալմաստ եւ ամփոփեցաւ Փոյաջակի Հայոց Ս.
Ա. տաւածածին եկեղեցւոյ դռնի մէջ, ուր սովորաբար իբրեւ ամուսնացեալ
կրնակին Ասորպատականի Առաջնորդները, որոնցից սմանք եւս թաղաւած են
այնտեղ:

Լուսաւորեացէ Տէր զհոգի Հանդուցելոյն